ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2022 թվականի №__-Ա
ք. Երևան

«ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի №350Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշմամբ երկարաձգվել է «Էլեգիս Հ.Է.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0221 լիցենզիայի գործողության ժամկետը, իսկ որոշման 2-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է երկամսյա ժամկետում՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը, Հանձնաժողով ներկայացնել Կայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն,

բ) Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականի դեկտեմբերի 28-ի №0444-21 ջրօգտագործման թույլտվությունը, որում նշված Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերը կրկին չեն համապատասխանում Կայանի կառուցման աշխատանքային նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-10 և «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության 2003 թվականի նոյեմբերի 19-ի փորձաքննական եզրակացություններում նշված Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերին,

գ) Հանձնաժողովը 2022 թվականի հունվարի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշման 2-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի հունվարի 20-ի և փետրվարի 11-ի գրություններով ըստ էության ընդունել է թույլ տրված խախտումը և հայտնել, որ կրկին դիմել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման մեջ առկա տեխնիկական վրիպակների շտկման նպատակով, հետամուտ կլինի ճշգրտված ջրօգտագործման թույլտվության ստացմանը և այն ստանալուն պես կներկայացնի Հանձնաժողով,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշման 2-րդ կետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշման 2-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի №251Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №350Ա որոշման 3-րդ կետում «սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «մինչև 2022 թվականի հունիսի 14-ը» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, իսկ 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ապրիլի 2022թ.